



Նանե ՍԱՀԱԿՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՆԵՐՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պետական կարիքների համար պայմանագրի կնքումը պետական գնման գործընթացի բաղկացուցիչ մասն է¹: Պետական գնումների ոլորտի օրենսդրության ուսումնասիրման արդյունքում գնման ընթացակարգերի միջոցով պետական կարիքների բավարարման պրոցեսը կարելի է բաժանել երեք հիմնական փուլի՝ պետական պատվերի ձևավորում, պետական պատվերի տեղաբաշխում պայմանագրի կնքմամբ, պայմանագրի կատարում: Այս փուլերի մեջ պայմանագրի կնքմամբ նշանավորվում է պետական պատվերի տեղաբաշխման փուլի ավարտը և պատվերի իրականացման փուլի սկիզբը: Ուստի, պայմանագիրը պատվերի իրացման երկու փուլերին էլ վերաբերում է, այսինքն՝ կարելի է փաստել, որ այն պատվերի իրացման իրավական ձև է²: Պետական պատվերի իրականացումը հենց պատվիրատուի և մատակարարի, կապալառուի կամ կատարողի կողմից պետական պայմանագրերով ստանձնած պարտականությունների կատարումն է³: Պետական կարիքների համար ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումը մի կողմից պետական պատվերից ծագող միջնորդավորված հարաբերությունների իրավական ձևն է, մյուս կողմից՝ պետության կողմից տնտեսության կարգավորման ընթացքում օգտագործվող մասնավոր-իրավական միջոց⁴:

Անդրադառնալով պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթին՝ պետք է նշել,

որ մասնագիտական գրականությունում միանշանակ նոտեցում չկա այդ հարցի վերաբերյալ: Բանն այն է, որ շուկայական տնտեսությանն անցման պայմաններում ապրանքների շրջանառության դիրեկտիվային-պլանային մեթոդներից հրաժարումն ուղեկցվում է տնտեսության կարգավորման վարչական մեթոդների փոխարեն պայմանագրային մեթոդների կիրառմամբ: Ընդլայնվում են պայմանագրի կիրառման ոլորտները: Պայմանագիրը՝ որպես իրավահարաբերությունների կարգավորիչ, սկսում է կիրառվել ոչ միայն ավանդական ոլորտներում՝ քաղաքացիական, աշխատանքային, այլ հանրային-իրավական ոլորտներում՝ հարկային, մաքսային և այլն, և յուրաքանչյուր ոլորտում այն դրսևորում է իր առանձնահատկությունները⁵, թեև հիմնական հատկանիշները՝ կողմերի համաձայնությունն իրավունքների և պարտականությունների սահմանման վերաբերյալ, կողմերի մտադրությունն ինքնուրույն կատարել պայմանագիրը, կողմերի կամահայտնությունը, պայմանագրի իրավականորեն թույլատրելի լինելը, պետական հարկադրանքով պաշտպանված լինելը և այլն⁶, բնորոշ են բոլոր պայմանագրերին՝ անկախ ճյուղային պատկանելիությունից: Ուստի, պատահական չէ, որ խնդիր է առաջանում պետական գնումների արդյունքում կնքվող պայմանագրի բնույթը որոշելիս:

Նախքան այդ հարցին անդրադառնալը՝ անհրաժեշտ է նախևառաջ պարզել պետական գնումների ոլորտի ճյուղային պատկանելությունը:

Պետական գնումների իրավական

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

**ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն**



կարգավորումը՝ սկսած պետական կարիքների ձևավորումից մինչև պայմանագրի կատարումը, կարգավորվում է իրավունքի տարբեր ճյուղերով (ընդ որում, ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր):

Տեսութայան մեջ առկա մոտեցումներից մեկի համաձայն՝ նույնիսկ պայմանագրային հարաբերությունների առկայությունը չի ենթադրում վարչական մեթոդի փոխակերպում, այլ միայն վերջինիս առանձնահատկություն է հանդիսանում, որոնց էլ հիմք է տալիս եզրահանգելու, որ պետական պատվերի ձևավորման և իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջությունը վարչական իրավունքի ինստիտուտ է⁷:

Պետական կամ համայնքային պատվերի տեղաբաշխման հետ կապված հարաբերություններն այս կամ այն իրավունքի ճյուղին դասելու հետ կապված մեկ այլ կարծիքի համաձայն՝ պետական պայմանագրերի համար նորմատիվային հիմք հանդիսացող օրենսդրական ակտերն իրենց կառուցվածքով, առարկայով և մեթոդով համալիր են՝ ներառում են քաղաքացիական և վարչական իրավունքների նորմեր: Այդ օրենսդրական ակտերի իրավական կարգավորման առարկան է պետական կարիքների բավարարման ոլորտում պետության գործունեության նպատակաուղղված կառավարումը, որպիսի հանգամանքը բնորոշ է վարչական իրավունքին: Այդուհանդերձ, պետական պայմանագիրը չի կարգավորվում վարչական իրավունքի նորմերով, քանի որ պայմանագրային կառուցակարգի առկայությունն ակնհայտորեն վկայում է նշված հարաբերությունները քաղաքացիական իրավունքին պատկանելու մասին: Հաշվի առնելով նշված հարաբերություններում քաղաքացիական իրավունքի այնպիսի սկզբունքների առկայությունը, ինչպիսիք են կողմերի իրավահավասարությունը և պայմանագրի ազատությունը, ենթադրվում է, որ պե-

տական գնումների հետ կապված հարաբերությունների առնվազն մի մասն ունի քաղաքացիաիրավական բնույթ⁸:

Մեր կարծիքով՝ պետական գնումների հետ կապված հարաբերությունները համալիր բնույթ են կրում՝ կարգավորվելով և՛ հանրային-իրավական, և՛ մասնավոր-իրավական նորմերով: Այսպես, պետական պատվերի ձևավորման փուլը, որը ներառում է և՛ գնումների պլանավորումը, և՛ գնումների ֆինանսավորման նպատակով պետական կամ համայնքային բյուջեում համապատասխան միջոցների նախատեսումը, հանրային-իրավական բնույթի է, այս փուլին բնորոշ չէ մասնավոր իրավունքի համար առանցքային համարվող կողմերի իրավահավասարությունը և կողմերից մեկի՝ մյուսի նկատմամբ ենթակայության բացակայությունը: Պետությունը կամ համայնքն է որոշում պատվերի ձևավորման հետ կապված հարցերը՝ սեփական հայեցողությամբ՝ դարձնելով այն պարտադիր գնման գործընթացի հետագա փուլերի համար:

Ինչ վերաբերում է պատվերի տեղաբաշխման փուլին, որը սկսվում է գնման ընթացակարգ անցկացնելու վերաբերյալ հայտարարությամբ և ավարտվում պայմանագրի կնքմամբ, ինչպես նաև կնքված պայմանագրի կատարման փուլին, ապա այս դեպքում թեև առկա են որոշակի առանձնահատկություններ (օրինակ՝ գնումների գործընթացի մասնակիցը չունի ճկունություն պայմանագրի պայմանները որոշելիս), այդուհանդերձ, այս հարաբերություններում բացակայում է աստիճանական ենթակայությունը, պետությունը՝ ի դեմս համապատասխան պատվիրատուների, հանդես է գալիս գնումների գործընթացի մասնակցի հետ հավասար պայմաններում: Պետությունը տվյալ հարաբերություններում չի օգտագործում իր իշխանական լիազորությունները: Հետևաբար, այս երկու փուլերը կարգավորող իրավական նորմերը քաղաքացիաիրավական բնույթի են:

Անդրադառնալով պետական կարիք-

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



ների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի բնույթին՝ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ նշված պայմանագիրը դիտարկվում է և՛ որպես վարչական պայմանագիր, և՛ որպես դասական քաղաքացիական պայմանագիր, և՛ որպես գործարարական պայմանագիր, և՛ որպես խառը պայմանագիր և այլն:

Վարչական իրավունքի գիտության ներկայացուցիչները, ուսումնասիրելով պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի առանձնահատկությունները, փորձում են վեր հանել պայմանագրի վարչական-իրավական բնույթը⁹: Մասնավորապես, վարչական իրավունքի մասնագետները հակված են այն կարծիքին, որ պետական պայմանագիրը վարչական պայմանագիր է, քանի որ կոնտրագենտներն ունեն ոչ միանման կարգավիճակ¹⁰: Այդուհանդերձ, առավել տարածված է այն տեսակետը, որ սկզբունքորեն անհնար է վարչական պայմանագրի գոյությունը, քանի որ վարչաիրավական հարաբերություններն անհամատեղելի են պայմանագրի ազատության սկզբունքի հետ: Այս մոտեցման համաձայն՝ բոլոր, այսպես կոչված, վարչական պայմանագրերը կա՛ն խառը բնույթի պայմանագրեր են, որոնք կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ այնքանով, որքանով կիրառվող նորմերը չեն հակասում հատուկ օրենսդրությանը, կա՛ն էլ հանրային սուբյեկտների միակողմանի կամային ակտեր են: Երկու պարագայում էլ պայմանագրի նման առանձին տեսակն առանձնացնելու հիմքերը բացակայում են¹¹: Նաև նշվում է, որ թեև մատակարարի (կատարողի, կապալառուի) կամքի ինքնավարությունը որոշակիորեն սահմանափակված է պետական գնումների գործընթացում, այդուհանդերձ, այն պետության և մատակարարի (կատարողի, կապալառուի) միջև հարաբերությունները չի դարձնում վարչաիրավական¹²:

Գիտնականների մեկ այլ խումբ

գտնում է, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է իր ամբողջ բովանդակությամբ, այդ պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն իրավահավասար սուբյեկտների միջև ծագող հարաբերություններ են¹³, իսկ պետության անունից հանդես եկող անձինք ոչ թե իրականացնում են իրենց կառավարչական գործառույթները, այլ իրենց տնտեսական գործունեությունը: Ուստի, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերը քաղաքացիաիրավական պայմանագրերի տեսակ են¹⁴:

Ընդ որում՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը երբեմն նույն հարթության մեջ է դրվում նաև միանալու և հրապարակային պայմանագրերի¹⁵, ինչպես նաև խառը պայմանագրերի¹⁶ հետ:

Մեր կարծիքով, անգամ պայմանագրի կողմի՝ պայմանագրի պայմանները որոշելու հարցում սահմանափակ ազատություն ունենալը պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերը չի դարձնում վարչաիրավական, քանի որ նման պայմանագրեր առկա են նաև քաղաքացիական իրավունքում, մասնավորապես հրապարակային կամ միանալու պայմանագրերի դեպքում պայմանագրի մի կողմը սահմանափակված է պայմանագրի պայմանները որոշելու հարցում:

Չնայած առկա որոշ նմանություններին, պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը չի կարող համարվել հրապարակային պայմանագիր, քանի որ վերջինիս բնորոշ չեն հրապարակային պայմանագրին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները:

Այսպես՝ հրապարակային պայմանագիրը կնքվում է առևտրային կազմակերպության և սպառողի միջև կազմակերպության իրականացրած այնպիսի գործունեության հետ կապված, որը կազմակերպությունը պարտավոր է իրակա-



նացնել յուրաքանչյուրի նկատմամբ, ով կղիմի իրեն (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ, կապի ծառայություններ, էներգամատակարարում, բժշկական, հյուրանոցային սպասարկում և այլն): Մինչդեռ պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը կնքվում է պետական պատվիրատուի և որպես կանոն գործարարական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող սուբյեկտի միջև: Հրապարակային պայմանագրի դեպքում պայմանագրի բոլոր պայմանները, այդ թվում՝ գինը, բոլոր սպառողների համար սահմանվում է միանման, իսկ պետական կարիքների համար կնքվող պայմանագրի դեպքում, որպես կանոն, հենց գինն է որոշիչ լինում պայմանագրի մյուս կողմին ընտրելիս¹⁷:

Մեր կարծիքով՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը չի կարող համարվել նաև միանալու պայմանագիր, քանի որ թեև միանալու պայմանագրերի դեպքում ևս միացող կողմը պարզապես միանում է առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ՝ ընդունելով բոլոր պայմանները, սակայն միանալու պայմանագրի դեպքում միացող կողմն օժտված է հետևյալ իրավունքով, որը բնորոշ չէ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրին: Այսպես՝ միանալու պայմանագրին միացած կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը թեկուզև չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, սակայն այդ կողմին գրկում է նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորու-

թյուն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը:

Ընդ որում՝ միանալու պայմանագրի դեպքում թեև վերոնշյալ իրավունքը սահմանափակված է գործարարական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող անձանց համար, սակայն նկատի ունենալով, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի կողմ կարող են լինել նաև գործարարական (ձեռնարկատիրական) գործունեություն չիրականացնող անձինք, որոնք, այդուհանդերձ, չեն օգտվում վերը նշված երաշխիքից, կարծում ենք՝ արդարացված չէ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը համարժեք դարձնել միանալու պայմանագրերին: Բացի այդ՝ միանալու պայմանագրեր սովորաբար կնքվում են այն դեպքերում, երբ միացող անձն օբյեկտիվորեն չի կարող չօգտվել պայմանագրի առարկայից (օրինակ՝ ջրամատակարարում, գազամատակարարում և այլն), մինչդեռ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիր կնքելը պարտադիր չէ բնականոն գործունեության իրականացումն ապահովելու համար¹⁸:

Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը նպատակաուղղված է ապահովել հավասարակշռություն պայմանագրային հարաբերությունների կողմերի շահերի միջև՝ հաշվի առնելով, որ այդ կողմերից մեկը պետության անունից հանդես եկող սուբյեկտն է: Ընդ որում՝ պետական պատվիրատուները պայմանագիր կնքելիս հանդես են գալիս հանրային շահերից ելնելով: Նրանք պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունեն: Այս պայմանագրերի վճարումն իրականացվում է համապատասխան բյուջեի հաշվին՝ նախապես որոշված բյուջեի տային պարտավորությունների շրջանակում¹⁹: Ըստ Վ. Ս. Գլադկովի՝ պետական



կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հիմնական գործառույթը ոչ թե քաղաքացիաիրավական պայմանագրերին բնորոշ՝ բարիքների փոխանցման նպատակն է, այլ տարբեր սուբյեկտների համաձայնեցված գործունեության կազմակերպումը՝ ուղղված պետական կարիքների բավարարմանը²⁰:

Իհարկէ՛ չպետք է թերագնահատել պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի դերը նաև պայմանագրի մյուս կողմի՝ մատակարարի, կապալառուի կամ կատարողի համար, ովքեր, որպես կանոն, գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են: Պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագրի կնքման կարևորագույն նպատակներից մեկը նաև գործարար կառույցների գործարար ակտիվության խթանումն է²¹: Այս պայմանագրերի կնքման արդյունքում վերջիններս ակնկալում են ստանալ շահույթ, որն առևտրային գործունեություն իրականացնող սուբյեկտների գործունեության հիմնական նպատակն է: Հենց շահույթ ստանալու նպատակով են վերջիններս մասնակցում գնման գործընթացներին: Պետական գնումներին մասնակցելը հատկապես շահավետ է փոքր և միջին գործարարական գործունեություն իրականացնողների համար, որոնք, հաղթող ճանաչվելով գնման գործընթացում, հնարավորություն են ունենում իրացնել իրենց գործարարական գործունեության արդյունքը՝ անկախ նրանից, թե շուկայում ինչ դիրք են գրավում: Նման պայմանագրեր կնքելը «գրավիչ» է նաև նրանով, որ պայմանագրի գինը վճարվում է պետական կամ համայնքային բյուջեի միջոցներով, ինչը ձեռնտու է ոչ մեծ կազմակերպություններին այնքանով, որքանով վերջիններս որոշակիորեն ապահովագրված են, որ կոնտրագենտի անվճարունակության պատճառով իրենց հասանելի չափույթը ստանալու խնդիր չի առաջանա՝ հաշվի առնելով, որ պատվիրատուն պայմանագրով ֆինանսա-

կան պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակում²²: Ընդ որում, գնման գործընթացի և մասնավորապես կնքվող պայմանագրերի՝ փոքր և միջին գործարարության բնագավառում ունեցած կարևոր դերի մասին է վկայում նաև այն, որ տարբեր անձանց, լրագրողների կողմից իրականացնող մոնիթորինգների արդյունքում շեշտը դրվում է հենց վերջիններիս մասնակցության ուսումնասիրության վրա: Ավելին՝ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելիս ևս փորձ է արվում վերջիններիս մասնակցությունը դարձնել ավելի արդյունավետ²³: Բանն այն է, որ պետության տարբեր հատկանիշների գնահատումներն իրականացնելիս, այդ թվում կոռուստպացվածության ցուցանիշը որոշելիս կարևոր նշանակություն ունի նաև այն, թե որքանով են փոքր և միջին գործարարները մասնակցում պետական գնումներին, այսինքն՝ թե պետական պատվերները որքանով են հասանելի փոքր և միջին գործարարների համար, որքան է մրցակցությունն ազատ այս ոլորտում:

Հետևաբար՝ միանշանակ է, որ պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագրերի կնքումը նույնքան կարևոր է ինչպես պետության, այնպես էլ գործարար շրջանառության մասնակիցների համար: Այսինքն՝ մեր կարծիքով՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի նպատակները ձևակերպելիս չպետք է սահմանափակվել միայն պետության կարիքներով, երկկողմանի նկարագրությունն ապահովելու համար պետք է ուշադրություն դարձնել նաև կոնտրագենտի նպատակներին:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերը, ինչպես մյուս պայմանագրերը, ներառում է միանգամայն տարբեր և հակադիր շա-



հեր՝ մի կողմից՝ հանրային կարիքների բավարարում հնարավորինս քիչ ծախսերի միջոցով, մյուս կողմից՝ սեփական արտադրանքի, ծառայությունների իրացում՝ շահույթի ստացմամբ:

Չնայած գնումների գործընթացում հանրային-իրավական և մասնավոր-իրավական տարրերի միաժամանակյա առկայությանը՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի իրավական կարգավորումը պահանջում է միասնականություն: Այդ հավասարակշռությանը հնարավոր է հասնել ոչ թե պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի՝ տարբեր ճյուղերին բնորոշ տարբերությունների առանձնացմամբ, այլ հատուկ մեթոդների կիրառմամբ, որոնք մշակվում են հիմնականում գործարարական իրավունքի կողմից²⁴: Հաշվի առնելով հանրային և մասնավոր շահերի գույակցումը պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրում՝ մասնավորապես հանրային պահանջումների բավարարումը և մասնավոր անձի կողմից շահույթ ստանալը, որոշ գիտնականներ գտնում են, որ նշված պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ հանդիսացող գործարարական (ձեռնարկատիրական) յուրահատուկ պայմանագիր է, այսինքն՝ այնպիսի պայմանագրի տեսակ, որի մի կողմը, որպես կանոն, գործարարական իրավունքի սուբյեկտ է, իսկ պայմանագրի առարկան՝ գործարարական գործունեության արդյունք²⁵:

Ամփոփելով վերը շարադրված տարրերի տեսակետները՝ մենք համակարծիք ենք այն գիտնականների հետ, որոնց նշված պայմանագրերը համարում են քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ հանդիսացող գործարարական պայմանագիր՝ իրենց բնորոշ որոշակի առանձնահատկություններով:

Հարկ ենք համարում նշել, որ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերը տարբեր-

վում են ինչպես դասական քաղաքացիաիրավական պայմանագրերից, այնպես էլ գործարարական պայմանագրերից:

Նախ՝ նշված պայմանագրերի հիմքում պետական պատվերն է, որի հիման վրա հետագայում որոշվում է պայմանագրի առարկան: Պատվերը ձևավորվում է բացառապես պետական պատվիրատուի կողմից՝ պետական իշխանական գործառույթների իրականացման արդյունքում: Հետևաբար, պայմանագրի հիմքում ընկած պատվերի ձևավորման հարաբերությունները հանրային-իրավական են:

Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հիմնական տարբերությունը քաղաքացիաիրավական դասական պայմանագրերից պայմանագրի ազատության սկզբունքի յուրահատուկ դրսևորումն է: Չնայած պայմանագրի ազատության սկզբունքը, ըստ էության, գործում է նաև գնումների գործընթացում, սակայն այդ ազատությունը սահմանափակ է: Այսպես, պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագիր կնքելը պարտադիր է պետական պատվիրատուի համար ի սկզբանե, պարզապես գնման գործընթացում որոշվում են այդ պայմանագրի պայմաններն ու կոնտրագենտը: Ինչ վերաբերում է մատակարարին (կատարողին, կապալառուին), ապա վերջինիս համար պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիր կնքելը պարտադիր է միայն օրենքով սահմանված դեպքերում²⁶, ընդ որում, պետական պատվիրատուն պարտավոր է հատուցել պետական պայմանագրի կատարման հետ կապված ծագող բոլոր վնասները²⁷:

Պայմանագրի ազատության սկզբունքից մյուս «շեղումը» դրսևորվում է պայմանագրի պայմանները որոշելիս: Պայմանագրի պայմանները հիմնականում նախապես որոշված են լինում, ինչի մասին է վկայում մասնավորապես այն, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի²⁸ 28-րդ հոդվածով սահմանված է, որ հրավե-

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



րը պարունակում է նաև պայմանագրի նախագիծը, ինչպես նաև այն, որ նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարությունը սահմանում է պայմանագրի հիմնական պայմանները: Բացի այդ՝ բավականին ընդունված պրակտիկա է նաև, այսպես կոչված, «տիպային» պայմանագրերի առկայությունը, որը երբեմն անհավասար դրության մեջ է դնում գնման գործընթացին մասնակցող անձանց՝ սահմանափակելով պայմանագրի մյուս, թեկուզ ոչ հիմնական պայմանները որոշելու հնարավորությունը, որպիսի պայմաններում վերջիններս երբեմն կարող են հայտնվել ոչ բարենպաստ դրության մեջ²⁹: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ պետական գնումների գործընթացում կնքվող պայմանագրերի նկատմամբ պայմանագրի ազատության սկզբունքը գործում է որոշակի վերապահումով: Ընդ որում, ինչպես արդեն նշեցինք, նշված պայմանագրերը չեն նույնանում հրապարակային կամ միանալու պայմանագրերի հետ, որոնց դեպքում նույնպես պայմանագրի ազատության սկզբունքը դրսևորվում է որոշակի առանձնահատկությամբ:

Այդուհանդերձ, չնայած որոշակի վերապահումներով, բայցևայնպես, պայմանագրի ազատության սկզբունքը գործում է պետական կարիքների բավարարման համար կնքվող պայմանագրերի նկատմամբ՝ ենթադրելով կամքի ինքնավարության առկայություն, որը բացառվում է վարչական իրավունքում: Բացի այդ՝ անկախ պայմանագրի կնքման նպատակի որոշակի հանրային բնույթին, ի վերջո պետական պայմանագրով կարգավորվում են գույքային հարաբերություններ՝ կապված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման հետ: Պայմանագրի մյուս կողմը, որպես կանոն, գործարարական գործունեություն իրականացնող անձ է՝ մատակարարը, կատարողը կամ կապալառուն: Պետական պատվիրատու հանդես եկող սուբյեկտները իրավահավասար դիրքում

են գտնվում են պայմանագրի մյուս կողմի հետ: Չնայած պայմանագրի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի հաշվին, սակայն այս դեպքում գործում են ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական հարաբերություններ, պետությունը չի իրականացնում իր կառավարչական գործառնությունները: Պայմանագրի կնքման հարցում կողմերն ազատ են (բացառությամբ օրենքով սահմանված բացառիկ դեպքերի): Բացի այդ՝ գնումների վերաբերյալ օրենսդրությունից պարզ է դառնում, որ վերջինս պայմանագրի կատարման փուլի մասով հատուկ կարգավորում չի նախատեսում, հետևաբար, կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները:

Այն, որ պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը քաղաքացիաիրավական է, հիմնավորվում է նաև այդ պայմանագրի խախտման դեպքում կիրառվող պատասխանատվությամբ:

Պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանը «Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը» աշխատության մեջ նշում է, որ իրավական պատասխանատվությունը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում թույլ տրվող իրավախախտումների դեմ պայքարի հիմնական միջոցն է: Որպես մասնավոր հարաբերություններում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առանձնահատուկ միջոց՝ այդ պատասխանատվությունը առաջին հերթին կոչված է ապահովելու տնտեսական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, նրանց կողմից օրենսդրության պահանջների, գործարար շրջանառության սովորույթների, ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը: Այն միջոց է, որի օգնությամբ պետությունն ապահովում է մասնավոր հարաբերությունների մասնակիցների կողմից իրավակարգի պահպանությունը: Գույքային պատասխանատվությունը միաժամանակ նաև



սուբյեկտիվ իրավունքների պատշաճ իրականացման երաշխիք է, քանի որ նյութական ներգործության միջոցների կիրառման սպառնալիքը հարկադրում է ցուցաբերել պատշաճ վարքագիծ, իսկ իրավախախտման դեպքում ապահովում է առաջացած վնասակար հետևանքների վերացումն իրավախախտի հաշվին: Որպես սուբյեկտիվ իրավունքների պահպանության եղանակ՝ գույքային պատասխանատվությունն ունի մասնավոր հարաբերությունների բնույթով և բազմազանությամբ պայմանավորված այնպիսի բնութագրիչ առանձնահատկություններ, որոնցով սահմանազատվում է ինչպես հանրային պատասխանատվության տեսակներից, այնպես էլ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն ապահովող այլ իրավական ինստիտուտներից³⁰:

S. Կ. Բարսեղյանն առանձնացնում է վերոնշյալ պատասխանատվության էությունից և սոցիալական նշանակությունից բխող հետևյալ առանձնահատկությունները, որոնք մեր կարծիքով բնորոշ են նաև պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի խախտման համար կիրառվող պատասխանատվությանը.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված պատասխանատվությանը վերաբերող նորմերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնել, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնական տարբերիչ առանձնահատկությունը նրա գույքային բնույթն է, որի պատճառով էլ օրենսդիրը քաղաքացիաիրավական պատասխանատվությունը իրավացիորեն որակում է գույքային պատասխանատվություն³¹:

Գնումների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունից ևս պարզ է դառնում, որ պայմանագրային պարտավորությունների խախտման համար կիրառվող պատասխանատվությունը նախ և առաջ գույքային է (օրինակ՝ պայմանագրի կողմը կարող է կորցնել պայմանագրի ապահովման գումարը):

2. Մասնավոր հարաբերություններում գույքային պատասխանատվությունը մեկ սուբյեկտի՝ իրավախախտողի պատասխանատվությունն է մեկ այլ սուբյեկտի՝ տուժողի հանդեպ: Այդ հարաբերություններում պետությունը հանդես է գալիս սոսկ հարկադրական ֆունկցիա իրականացնողի դերում: Այդ խախտումների համար կիրառվող սանկցիաները հետապնդում են տուժողի իրավունքները վերականգնելու կամ վնասները փոխհատուցելու նպատակ: Այն առանձին դեպքերը, երբ օրենսդրությունը նախատեսում է սանկցիաների գանձում հոգուտ պետության, հանդիսանում են ընդհանուր կանոնի հաստատում և վկայում են այն մասին, որ խախտումները շոշափում են պետության և հասարակության շահերը (հանրային շահերը), որը և կանխորոշում է բռնագանձողական բնույթի միջոցների կիրառությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 284-րդ, 288-րդ, 313-րդ հոդվածներ և այլն)³²:

Գնումների ոլորտի առանձնահատկությունն այն է, որ տվյալ հարաբերությունների կողմ է նաև պետությունը՝ ի դեմս համապատասխան պետական պատվիրատուի, սակայն տվյալ դեպքում պետությունը հանդես է գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի ուժով):

Ընդ որում՝ կարևոր ենք համարում նշել, որ պետության կողմից կիրառվող օպերատիվ ներգործության միջոցները (օպերատիվ սանկցիաները) ևս նպատակ ունեն հաստատելու նշված ընդհանուր կանոնը: Մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի հիմքով՝ մասնակիցը կարող է ընդգրկվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորու-

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



բյուրը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Նշված միջոցն իր բնույթով տարբերվում է քաղաքացիաիրավական ներգործության սովորական միջոցներից³³, քանի որ այն կիրառվում է ոչ թե ուղղակիորեն որպես պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանք, որի նպատակը տուժող կողմի իրավունքների վերականգնում է, այլ այս դեպքում պետությունը՝ ի դեմս համապատասխան լիազոր մարմնի, «Գնումների մասին» ՀՀ օրենքը խախտած մասնակցին արգելում է ապագայում իր հետ մտնել պայմանագրային հարաբերությունների մեջ: Այլ կերպ ասած՝ պետությունն իրավախախտում թույլ տված մասնակցին հայտնում է, որ որոշակի ժամանակահատվածի ընթացքում վերջինիս հետ պայմանագիր չի կնքի: Հետևաբար, անգամ նշված ներգործության միջոցն է իր բնույթով քաղաքացիաիրավական և դրա առկայությունը պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը չի դարձնում վարչական:

3. Գույքային պատասխանատվության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ կառուցված է դիսպոզիտիվության սկզբունքով: Այդ սկզբունքը գործում է ինչպես պատասխանատվության միջոցներ հանդիսացող սանկցիաներ սահմանելիս, այնպես էլ պատասխանատվության կիրառման հարցը լուծելիս: Պատասխանատվության դիսպոզիտիվությունը դրսևորվում է նաև նրանում, որ տուժող կողմն ինքն է իրավասու որոշել կիրառել³⁴ հարկադրանք, թե³⁵ հրաժարվել հարկադրանք կիրառելու իրավունքից: Անգամ այն դեպքերում, երբ իրավախախտման հետևանքով առաջացել են գույքային վնասակար հետևանքներ, իրավախախտողից վնասների հատուցում պահանջելու հայց հարուցելը հանդիսանում է տուժողի (*գնումների հարաբերությունների դեպքում՝ պետական կա-*

րիքների համար կնքվող պայմանագրի կողմի – Ն. Ս.) իրավունքը³⁴:

4. Գույքային պատասխանատվության սոցիալ-տնտեսական բնութագրական հատկանիշներից մեկն այդ պատասխանատվության փոխհատուցողական գործառույթն է:

5. Պատասխանատվությունն այլ անձանց սուբյեկտիվ իրավունքների պահպանությունն իրավախախտի հաշվին ապահովող հարկադրման միջոց է: Այն ապահովված է իրավախախտողի վրա ճնշում գործադրելու իրական հնարավորությամբ: Այդ պատճառով հարկադրելիության տարրը հանդիսանում է գույքային պատասխանատվության անբաժանելի հատկանիշը: Հարաբերության մասնակիցներն ի սկզբանե չեն կարող կանխատեսել պարտավորությունների կատարմանն ուղեկցող բոլոր իրավիճակները և պարտավորությունների կատարմանը խոչընդոտող փաստական հանգամանքները: Բնական է, որ պարտավորությունների կատարման խոչընդոտները չհաղթահարելու, կատարման ընթացքում այլ թերացումներ ցույց տալու դեպքերում գործադրվում է պատասխանատվության մեխանիզմը:

Գույքային հարկադրանք կիրառելիս պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես կողմ, որի օգտին գանձվում են օրենքով նախատեսված սանկցիաները, ինչպես դա տեղի է ունենում հարկային, վարչական և քրեական հարաբերություններում, այլ իրականացնում է սուկ հարկադրողի դերակատարություն: Նրա կողմից կիրառված հարկադրանքի արդյունավետությունը կամ անարդյունավետությունը գնահատվում է՝ հարկադրանքի վերջնական արդյունքից ելնելով, մասնավորապես այն փաստից, թե հարկադրանքի կիրառման արդյունքում ինչ չափով են փոխհատուցվում տուժողի կրած վնասները: Բնական է, որ հարկադրելիության բարձրագույն նպատակը վնասների լրիվ փոխհատուցումն է³⁵:

Պետական կարիքների համար



կնքվող պայմանագրային հարաբերություններում ևս պետությունը կատարում է նույն դերը, ինչ սովորական քաղաքացիաիրավական հարաբերություններում: Տվյալ դեպքում նույնպես կիրառվող պատասխանատվության նպատակը տուժողի վնասների հատուցումն է, սակայն նշված դեպքում տուժողը հենց պետությունն է: Այդուհանդերձ, պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես հասարակական հարաբերությունները կարգավորող պետական-իշխանական գործառնությունով օժտված սուբյեկտ, այլ որպես պայմանագրի սովորական կողմ: Հետևաբար, քաղաքացիաիրավական պատասխանատվության վերոնշյալ հատկանիշները կիրառելի են նաև պետական կարիքների համար կնքվող պայմանագրային հարաբերություններում:

6. Գույքային պատասխանատվության հաջորդ հատկանիշն (*որն առկա է նաև գնումների հարաբերություններում-Ն. Ս.*) այն է, որ իրավախախտողի համար պատասխանատվությունն առաջացնում է նյութական անշահավետ հետևանքներ: Այն իրավախախտին պարտադրում է փոխհատուցել տուժողի վնասները, վճարել տուժանք, տուգանք կամ որոշակի դրամական գումար³⁶:

Հանրագումարի բերելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ պետական կարիքների բավարարման համար կնքվող պայմանագրի խախտման դեպքում կիրառվող պատասխանատվությանը բնորոշ են քաղաքացիաիրավական պատասխանատվությանը բնորոշ հատկանիշները, ինչը ևս ապացուցում է, որ նշված պայմանագիրն իր բնույթով քաղաքացիաիրավական պայմանագիր է:

Եվ վերջապես նշված պայմանագրի կնքմամբ սահմանվում են ոչ թե վարչական, այլ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, որոնք կապված են գուտ այդ պայմանագրի կատարման հետ: Հետևաբար, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրով կարգավորվող

հարաբերությունները գույքային հարաբերություններ են, որոնք հիմնվում են քաղաքացիական իրավունքի սկզբունքների վրա՝ մասնավորապես մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության վրա, իսկ նման հարաբերությունները քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկայի մեջ են մտնում: Ուստի, մեր համոզմամբ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը քաղաքացիական պայմանագիր է: Ընդ որում, մեր կարծիքով՝ այն քաղաքացիական պայմանագրի տեսակ հանդիսացող գործարարական պայմանագիր է՝ իրեն բնորոշ հետևյալ առանձնահատկություններով:

Նախ՝ պետք է նշել, որ քանի որ գործարարական պայմանագիրը քաղաքացիական պայմանագրի հատուկ տարատեսակ է, վերոգրյալ բոլոր հատկանիշները կիրառելի են նաև գործարարական պայմանագրի նկատմամբ: Այդ պայմանագրերն առանձնահատուկ իրավական միջոցներն են, որոնց օգնությամբ գործարարական հարաբերությունների մասնակիցները մյուս կողմի շահերը բավարարելու միջոցով կարողանում են բավարարել սեփական պահանջումները: Այդ պայմանագրերի առանձնահատկություններն օրենսդիրն ընդգծում է սուսկ այն պատճառով, որ դրանցից բխող պարտավորությունների նկատմամբ նախ և առաջ կիրառվում են գործարարական գործունեությունից բխող պարտավորությունների համար նախատեսված հատուկ նորմերը և միայն դրանց բացակայության դեպքում՝ քաղաքացիաիրավական պարտավորությունները կարգավորող ընդհանուր նորմերը³⁷:

Պրոֆեսոր Տ. Բարսեղյանն առանձնացնում է գործարարական պայմանագրի հետևյալ առանձնահատկությունները:

ա) Գործարարական պայմանագրերը կնքվում են գործարարական գործունեություն իրականացնելու՝ գործարարական

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



շահերի և պահանջմունքների բավարարման նպատակով: Այդպիսի պայմանագրի կողմերը պարտավորական հարաբերությունների մեջ են մտնում ոչ թե անհատական, սպառողական պահանջմունքների բավարարման, այլ շահույթ ստանալուն ուղղված մասնագիտական գործունեություն իրականացնելու կամ գործունեության իրականացման գործընթացում առաջացող տնտեսական պահանջմունքները բավարարելու համար: Գործարարական գործունեության իրականացման համար կնքվող պայմանագրերի նկատմամբ կիրառվում են գործարարների պարտավորությունների նկատմամբ կիրառվող կանոնները:

բ) Տարանջատման հաջորդ չափանիշը մասնակիցների կազմն է: Գործարարական պայմանագիր կնքող սուբյեկտը կամ սուբյեկտներն իրենց կարգավիճակով տարբերվում են քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտներից: Այդպիսի պայմանագրեր կարող են կնքել միայն անհատ գործարարները, առևտրային իրավաբանական անձինք և ոչ առևտրային այն իրավաբանական անձինք, որոնց օրենքով կամ կանոնադրությամբ թույլատրված է իրականացնել շահույթ ստանալու հետ կապված գործունեություն: Առանձին դեպքերում օրենքն ուղղակի նշում է, որ տվյալ տեսակի պայմանագիր կարող են կնքել միայն գործարարները:

գ) Գործարարական պայմանագիրը գործարարական հարաբերությունների կարգավորիչն է: Գործարարական պայմանագրով են լուծվում օրենսդրության դիսպոզիտիվ նորմերով կարգավորված և օրենսդրությամբ չկարգավորված հարցերը, ինչպես նաև իրենց կարգավորումն են ստանում իրավահարաբերության մասնակիցների համար հետաքրքրություններ կապացնող խնդիրները:

դ) Գործարարների համար սահմանված են պայմանագրի կնքման և կատարման ավելի «խիտ» պահանջներ: Գործարարական պայմանագրերն այլ

պայմանագրերից տարբերվում են նաև կնքման առանձնահատկություններով:

Պրոֆեսոր Տ. Բարսեղյանն առաջարկում է գործարարական պայմանագրի հետևյալ հասկացությունը՝ գործարարական են համարվում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվում են գործարարությամբ զբաղվող սուբյեկտների կողմից գույքի օգտագործման, ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու համար³⁸:

Այսպիսով՝ գործարարական պայմանագրերի հիմնական առանձնահատկություններից է, որ այն կնքվում է գործարարական գործունեություն իրականացնելու համար գործարարի կողմից: Հարկ ենք համարում նշել, որ թեև պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերը հիմնականում կնքվում են գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից, սակայն դրանք կարող են կնքվել նաև ոչ գործարարների կողմից, և պարտադիր չէ, որ նշված պայմանագրի կնքումն անպայմանորեն պարունակի գործարարական գործունեության իրականացման հատկանիշներ³⁹: Այդուհանդերձ, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք կնքվում են ոչ թե սպառողական նպատակներով, այլ շահույթ ստանալուն ուղղված մասնագիտական գործունեություն իրականացնելու կամ գործունեության իրականացման գործընթացում առաջացող տնտեսական պահանջմունքները բավարարելու համար, իսկ նշված հատկանիշը բնորոշ է հենց գործարարական պայմանագրերին, ոչ թե դասական քաղաքացիաիրավական պայմանագրերին:

Կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները թույլ են տալիս առանձնացնել պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի հետևյալ առանձնահատկու-



թյունները.

1) պայմանագրի կողմերից մեկը պետության անունից հանդես եկող պատվիրատուն է, իսկ մյուս կողմը, որպես կանոն, գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտ,

2) նշված պայմանագիրը կնքելիս պետական պատվիրատուն հետապնդում է հանրային կարիքների բավարարման և պետական պատվերի կատարման նպատակ,

3) պայմանագրի մյուս կողմը պայմանագիրը կնքում է ոչ թե սպառողական, այլ շահույթ ստանալուն ուղղված մասնագիտական գործունեություն իրականացնելու կամ գործունեության իրականացման գործընթացում առաջացող տնտեսական պահանջումները բավարարելու նպատակով,

4) պայմանագրի առարկան որոշվում է պետական պատվերի հիման վրա,

5) պետական պատվերը տեղաբաշխվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված, որպես կանոն, մրցութային բնույթի ընթացակարգերով,

6) պայմանագրի դիմաց վճարումն իրականացվում է ոչ թե մասնավոր միջոցներով, այլ պետության բյուջեի միջոցների հաշվին,

7) պետական պայմանագրի առարկայի համար վճարումները կատարվում են պետական պատվիրատուին հատկացված բյուջետային միջոցների շրջանակներում:

Հետևաբար, վերոգրյալ առանձնահատկությունների հաշվառմամբ՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը կարելի է բնորոշել որպես պետական կարիքների բավարարման գործընթացում պետական պատվիրատուի կողմից պետության անունից նշված գործընթացում հաղթող մասնակցի հետ կնքվող պայմանագիր, որը կնքվում է սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

Ընդ որում՝ պայմանագրի յուրաքանչյուր տեսակով (ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում

(կապալ), ծառայությունների մատուցում, վարձակալություն, փոխադրում և այլն) պայմանավորված՝ պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագիրը ձեռք է բերում նաև տվյալ պայմանագրի տեսակին բնորոշ հատկանիշներ:

Սույն աշխատանքի շրջանակում հարկ ենք համարում անդրադառնալ նաև գնումների գործընթացում պայմանագրային կապերի կառուցվածքի առանձնահատկությանը:

Տեսության մեջ ընդունված մոտեցման համաձայն՝ պայմանագրային կապերի կառուցվածքով (պարզ կամ բարդ) պայմանավորված, պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրից բացի, կարող են կնքվել նաև այլ քաղաքացիաիրավական պայմանագրեր: Պայմանագրային պարզ հարաբերությունների դեպքում մատակարարը ապրանքները մատակարարում է ուղղակիորեն պատվիրատուին կամ նրան ճանաչում անձին՝ առանց այլ պայմանագրի կնքման: Պայմանագրային նման կապերի դեպքում պետական պատվիրատուի և մատակարարի միջև կնքվող պայմանագրերում նախատեսվում են մատակարարումն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Բարդ պայմանագրային հարաբերությունների դեպքում պետական պատվիրատուի և ընտրված մասնակցի (մատակարար) միջև կնքվում է պայմանագիր, որով նախատեսվում է այն անձը, ով պետք է կցվի ընտրված մասնակցին: Այնուհետև պատվիրատուի ծանուցման հիման վրա պայմանագրում նշված անձը (գնորդ) կնքում է պայմանագիր ընտրված մասնակցի հետ, որով էլ կարգավորվում են նրանց միջև ծագող պայմանագրային հարաբերությունները⁴⁰: Պայմանագրային նման կապերի դեպքում մատակարարումների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանների մասին համաձայնություն կայացնում են մատակա-



րարն ու գնորդը:

Ինչ վերաբերում է օրենսդրական կարգավորմանը, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-րդ հոդվածը նախատեսում է ինչպես պարզ, այնպես էլ բարդ հարաբերությունների առկայություն՝ սահմանելով, որ պետական կարիքները մատակարարվում են կա՛մ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման **պետական պայմանագրի** (պետական պայմանագիր) հիման վրա (պարզ հարաբերություններ), կա՛մ պետական պայմանագրի և դրան համապատասխան կնքված պետական կարիքների համար **ապրանքների մատակարարման** պայմանագրի հիման վրա (բարդ հարաբերություններ):

Փաստորեն, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է երկու տեսակի պայմանագրի կնքման հնարավորություն՝

1. պետական կարիքների համար ապրանքների մատակարարման **պետական պայմանագիր (պետական պայմանագիր)**,

2. պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագրին համապատասխան կնքված պետական կարիքների համար **ապրանքների մատակարարման պայմանագիր**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-549-րդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ վերոնշյալ երկու պայմանագրերը կնքվում են այն դեպքում, երբ պետական պատվիրատուն մրցույթի արդյունքում հաղթած անձի՝ մատակարարի հետ կնքում է պետական կարիքների համար ապրանքների մատակարարման **պետական** պայմանագիր (պետական պայմանագիր), և նույն պայմանագրում նախատեսվում է, որ ապրանքները պետք է մատակարարվեն այլ անձի՝ մատակարարին ամրակցված գնորդի, որի հետ էլ կնքվում է երկրորդ պայմանագիրը՝ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման

պայմանագիրը:

Այլ կերպ ասած՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանության.

1. պետական կարիքների համար ապրանքների մատակարարման **պետական** պայմանագրի կողմեր են պետական պատվիրատուն և մատակարարը,

2. պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի կողմեր են մատակարարը և պատվիրատուի կողմից վերջինիս ամրակցված գնորդը:

Այդուհանդերձ, «Գնումների մասին» ՀՀ օրենքը պայմանագրի կնքման նման ընթացակարգ չի նախատեսում⁴¹:

Մեր կողմից կատարված գործնական հետազոտությունների, այդ թվում՝ www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագրերի, դատական գործերի ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել միաժամանակ պետական պայմանագրի և պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի կնքման դեպք, այսինքն՝ քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածների կիրառելիության պրակտիկան բացակայում է:

Ընդ որում, հարցումներ ենք կատարել նաև մի շարք պետական մարմինների՝ խնդրելով հայտնել, թե գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումից ի վեր (մասնավորապես սկսած 21.08.2000 թվականից) կնքվել են արդյո՞ք պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագրեր (պետական պայմանագիր), որոնց հիման վրա հետագայում կնքվել են պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրեր, և եթե այո, ապա խնդրել ենք տրամադրել տեղեկատվություն դրանց ընդհանուր քանակի վերաբերյալ, ինչպես նաև խնդրել ենք հայտնել, թե որ սուբյեկտների միջև են կնքվել նշված պայմանագրերը: Լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկել է տեղեկատվությունը



ստանալ համապատասխան պետական կառավարման մարմիններից: Այլ մարմիններն (թվով 10 նախարարություններ, Երևանի քաղաքապետարան) ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատասխանել են, որ երբևէ չեն կնքել վերոգրյալ երկու պայմանագրերը:

Այսպիսով՝ տարբեր պետական պատվիրատուների կատարված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ գնումների վերաբերյալ չէ օրենսդրության և մասնավորապես 22.12.2010 թվականին ընդունված «Գնումների մասին» չէ օրենքի⁴² ընդունումից ի վեր չէ քաղաքացիական օրենսգրքի 540-րդ հոդվածով նախատեսված պայմանագրեր չեն կնքվել: Ընդ որում, պետք է նշել, որ 2016 թվականին ընդունված «Գնումների մասին» չէ օրենքը նախատեսում է կենտրոնացված եղանակով գնումների իրականացման հնարավորություն, որի իրականացման ընթացակարգը մանրամասնեցված է ի կատարումն վերոնշյալ օրենքի ընդունված չէ կառավարության որոշմամբ⁴³, այդուհանդերձ, նման ընթացակարգի կիրառման դեպքում ևս կնքվում է մեկ պայմանագիր⁴⁴:

Կենտրոնացված գնումների ընթացքում կնքվող պայմանագրերի բնույթի վերաբերյալ ևս հարցում ենք կատարել լիազոր մարմին հանդիսացող չէ ֆինանսների նախարարությանը: Մասնավորապես, խնդրել ենք հայտնել, թե կենտրոնացված գնում կազմակերպելու դեպքում պայմանագրերը ո՞ր սուբյեկտների միջև են կնքվում, արդյո՞ք պատվիրատուն, որի կարիքների բավարարման նպատակով անց է կացվում գնման ընթացակարգը, կնքում է պայմանագիր, և ի՞նչ եղանակով է ապահովվում պատվիրատուի իրավունքների և պարտականությունների իրականացումը գործնականում (այլ խոսքով՝ ինչպե՞ս է ապահովվում պատվիրատուի իրավասուբյեկտությունը տվյալ պայմանագրային հարաբերություններում):

Չէ ֆինանսների նախարարության

պատասխանի համաձայն՝ կենտրոնացված գնման դեպքում գործնականում պատվիրատուն պայմանագիր չի ստորագրում, սակայն պատվիրատուն է իրականացում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ընդունումը և դրանց դիմաց վճարումը, ինչպես նաև մասնակցի նկատմամբ կիրառում պայմանագրային պատասխանատվության միջոցները, որպիսի պրակտիկան բխում է գնումների վերաբերյալ չէ գործող օրենսդրության կարգավորումից:

Այսպիսով կարող ենք փաստել, որ անգամ կենտրոնացված գնման դեպքում չէ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրերը չեն կնքվում, ինչը, սակայն, չի խոչընդոտում պատվիրատուի կողմից իր իրավունքների լիարժեք իրացման համար:

Վերոգրյալի հիման վրա հանգում ենք եզրակացության, որ քաղաքացիական օրենսգրքով և «Գնումների մասին» չէ օրենքով պետական կարիքների համար կնքվող պայմանագրերի կնքման ընթացակարգերը միմյանցից տարբերվում են, ընդ որում, պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական մարմինները և մյուս պատվիրատուները առաջնորդվում են «Գնումների մասին» չէ օրենքով նախատեսված ընթացակարգերով, և ըստ էության, չէ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերը գործնականում չեն կնքվում:

Չէ քաղաքացիական օրենսգրքի քննարկվող նորմերի չկիրառումն ունի գործնական պատճառներ. կնքվող պայմանագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մեկ պայմանագրի կնքումը ոչ միայն դժվարություններ չի առաջացնում, այլ ավելի է պարզեցնում գնման գործընթացը:

Չետևաբար, կարծում ենք, որ չէ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումը կիրառելի չէ: Սա թույլ է տալիս հանգելու եզրակացության, որ նման պայմանագիր կնքելու հնարավորություն նախատեսելն ավելորդ ծան-



րաբեռնում է օրենսդրությունը, հակասություն ստեղծում ճյուղային օրենսդրության հետ: Նման հետևությունների արդյունքում կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ նախատեսելով միայն մեկ՝ պետական կարիքների համար կնքվող պայմանագրի կնքման հնարավորություն կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները սահմանափակել ճյուղային օրենսդրության հղմամբ, որի դեպքում ՀՀ քաղաքացիա-

կան օրենսգրքի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն հակասի միմյանց, ինչպես նաև արդեն 10 տարուց ավել գործող և այդ առումով խնդիրներ չառաջացնող պրակտիկային: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-549-րդ հոդվածներում՝ ուժը կորցրած ճանաչելով այն կարգավորումները, որոնք վերաբերում են երկրորդ պայմանագրի կնքմանը:

ՆՈՅՆԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

- 1 Համայնքային կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրերի նկատմամբ մույնպես կիրառելի են սույն հոդվածում կատարված վերլուծությունները:
- 2 Տե՛ս Կիչիկ Կ.Վ., «Государственный (муниципальный) заказ как средство государственного регулирования экономики: правовые вопросы, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук», Москва, 2011, էջ 193:
- 3 Տե՛ս մույն տեղում, էջ 192:
- 4 Տե՛ս Գубин Ե.Ս., «Государственное регулирование рыночной экономики- и предпринимательства: правовые проблемы», М.: Юристь, 2005, էջ 204-205:
- 5 Տե՛ս Андреева Л.В., «Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд: правовое регулирование», 2-е изд., перераб. и доп. – М.: «Волтерс Клувер», 2011, ԳԻՐԻՊԻՏԻՆԻՍ 5.1, ինտերնետային աղբյուր՝ <http://www.twirpx.com/file/533493/>, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:
- 6 Տե՛ս, օրինակ, Կорецкий А.Д., «Теоретико-правовые основы учения о договоре», отв. ред. П.П. Баранов. СПб., 2001, էջ 41, կամ Иванов В.В. «Общие вопросы теории договора». М., 2000, էջ 33:
- 7 Տե՛ս Գладков В.С., «Государственный заказ в сфере государственного управления экономикой. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук», Ростов-на-Дону, 2008, էջ 16-17:
- 8 Տե՛ս, օրինակ, Щербаков В.А., «Гражданско-правовое регулирование размещения государственных и муниципальных заказов в Российской Федерации: диссертация на

- соискание ученой степени кандидата юридических наук», Москва, 2009, էջ 42, Демин А., «Государственные контракты (публично-правовой аспект)», Хозяйство и право, 1997, N8, էջ 148-155:
- 9 Տե՛ս, օրինակ, Бахрах Д.Н., «Административное право: краткий учебный курс», М.: Норма-ИНФРА, 2000, էջ 16, կամ Шевченко Л.И. «Проблемы формирования договорных отношений поставки в условия становления в Российской Федерации рыночной экономики: Дисс., д.ю.н.», Кемерово, 2001, էջ 268:
- 10 Տե՛ս Գребенщикова Я.Б., «Понятие муниципального контракта, его правовая природа», Российская юстиция, N9, 2007, էջ 39:
- 11 Տե՛ս Забоев К.И., «Принцип свободы договора в российском гражданском праве: автореф. дис., канд. юрид. наук», Екатеринбург, 2002, էջ 16:
- 12 Տե՛ս Заботина Н.Н., «Правовая природа правоотношений, возникающих в связи с заключением контрактов на поставку товаров для государственных нужд: автореф. дис., канд. юрид. наук», Волгоград, 2006, էջ 8:
- 13 Տե՛ս Горбунова Л.В., «Поставка продовольствия для государственных нужд по российскому гражданскому праву: дис., канд. юрид. наук», Самара, 2003, էջ 75-77:
- 14 Տե՛ս, օրինակ, Камалов О.А., «Гражданская правосубъектность муниципальных образований: дис., канд. юрид. наук», Екатеринбург, 2001, էջ 161 կամ Шихова С.С. «Гражданско-правовое регулирование поставки товаров для государственных и муниципальных нужд: дис., канд. юрид. наук», Москва, 2011, էջ 65, կամ Тарабаев П.С. «Гражданско-правовое регулирование

- поставки товаров для федеральных государственных нужд: дис., канд. юрид. наук», Екатеринбург, 2008. էջ 83, 88:
- ¹⁵ Տե՛ս «Гражданское право: учебник: в 3 т., т. 2», отв. ред. А.П. Сергеев, Ю.К. Толстой. Москва, ТК Велби, Изд-во Проспект, 2007, էջ 74-83:
- ¹⁶ Տե՛ս Брагинский М.И., Витрянский В.В., «Договорное право. Кн. 3: Договоры о выполнении работ и оказании услуг», М., 2002, էջ 170:
- ¹⁷ Հրապարակային պայմանագրերի մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, Տ. Կ. Բարսեղյան «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 1-ին մաս, 3-րդ հրատարակություն, խմբագրությամբ՝ պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2006, էջ 444-445 կամ «Гражданское право: учебник в 3 т.», том 1, под ред. д.ю.н. А.П. Сергеева, Москва: РГ-Пресс, 2011, էջ 849-850:
- ¹⁸ Միանալու պայմանագրերի մասին առավել մանրամասն տե՛ս նույն տեղում:
- ¹⁹ Տե՛ս Блинков В.Г., «Правовое регулирование частных и публичных отношений при поставке товаров для государственных нужд, на соискание ученой степени кандидата юридических наук», Чебоксары, 2009, էջ 55-96:
- ²⁰ Տե՛ս Гладков В.С., «Государственный заказ в сфере государственного управления экономикой. Дисс., к.ю.н.», Ростов-на-Дону, 2008, էջ 9:
- ²¹ Տե՛ս Шевченко Л.И., Гредин Г.Н., «Госзаказ в системе государственного регулирования экономики», Кемерово, 1999, էջ 29:
- ²² «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է նման ընդհանուր կանոնից շեղում, երբ պայմանագիր կնքվում է նախքան ֆինանսական միջոցներ հատկացնելը՝ նախատեսելով նաև միջոցներ չտրամադրվելու հետևանքները:
- ²³ Մասնավորապես 16.12.2016 թվականին ըն-դրումված «Գնումների մասին» ՀՀ գործող օրենքի նախագիծն Ազգային ժողով ներկայացնելիս ներկայացվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն:
- ²⁴ Տե՛ս Андреева Л.В., «Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд: правовое регулиро- вание», 2-е изд., перераб. и доп. – М.: «Волтерс Клувер», 2011, պարագրաֆ 5.1, ինտեր-նետային աղբյուր՝ <http://www.twirpx.com/file/533493/>, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:
- ²⁵ Տե՛ս, օրինակ, Губин Е.П., Лахно П.Г., «Предпринимательское право РФ: учеб.», М.: Юристъ, 2005, էջ 186, Андреева Л.В. «Закупки товаров для федеральных государственных нужд: правовое регулирование», М., «Волтерс Клувер», 2009, էջ 210:
- ²⁶ Մասնավորապես մեր կարծիքով նման իրավիճակ կարող է առաջանալ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դեպքում, այն է՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:
- ²⁷ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 542-րդ հոդվածի 4-րդ մաս և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մաս:
- ²⁸ Ընդունվել է 16.12.2016 թվականին, ուժի մեջ է մտել 25.04.2017 թվականին, սկզբնաղբյուր՝ ՀՀ ՊՏ 2017.01.25/5(1280) Հոդ.57:
- ²⁹ <http://gnumner.am/> և <https://armeps.am/epps/home.do> կայքերում առկա մեր կողմից ուսումնասիրված պայմանագրերը տիպային են, պայմանները գրեթե սամոդջությամբ նույնական են բոլոր պայմանագրերի համար: Նշված տիպային պայմանագրերի՝ կոնտրագենտի համար երբեմն ոչ ձեռնտու ոչ էական պայման նախատեսելու մասին է վկայում նաև դատական գործերի առկայությունը (տե՛ս, օրինակ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ընդդեմ «Ամասիա» ՍՊԸ-ի բիլ ԵԱԶԳ/1025/02/14 քաղաքացիական գործը www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին):
- ³⁰ Տե՛ս Տ. Կ. Բարսեղյան, «Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը», Երևանի պետ. համալսարան, Երևանի համալս. հրատ., Երևան, 2006, էջեր 58-59:
- ³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 59-60:
- ³² Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:
- ³³ Տե՛ս Տ.Կ. Բարսեղյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 1-ին մաս, 3-րդ հրատարակություն, խմբագրությամբ՝ պրոֆ. Գ.Հ. Ղարախան-

ՆՈՅՆՄԱՐԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



Քաղաքացիական իրավունք

յանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2006, էջ 83-84:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 61-62:

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 62-68:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 68:

³⁷ Տե՛ս Ս. Բարսեղյան, «Պայմանագրի դերը գործարարական հարաբերությունների կարգավորման մեխանիզմում», ՀՀ իրավաբանների միություն «Պետություն և իրավունք», թիվ 3(49), 2010, էջ 12:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջեր 13-14:

³⁹ Այդ մասին տե՛ս սույն աշխատանքի 2-րդ գլխում:

⁴⁰ Տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», 2-րդ մաս, 2-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ՝ պրոֆ. Ս. Կ. Բարսեղյանի և պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008, էջ 74, Брагинский

М.И., Витрянский В.В., «Договорное право. Книга вторая: договоры о передаче имущества», М., 2000, էջ 117, Андреева Л.В., «Коммерческое право России: учебник», М., 2009, էջ 99:

⁴¹ Ընդ որում, նշվածը չի վերաբերում նաև «Գնումների մասին» ՀՀ 2010 թվականի օրենքով նախատեսված շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու դեպքերին:

⁴² Ուժի մեջ է մտել 01.01.2011 թվականին, ուժը կորցրել է 25.04.2017 թվականին, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2010.12.29/69(803) Հոդ.1596, համար՝ ՀՕ-206-Ն:

⁴³ Կենտրոնացված գնումների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս սույն աշխատանքի 3.1 պարագրաֆը:

⁴⁴ Տե՛ս http://gnumner.am/hy/page/gnumneri_haytarutyunner/ կայքում, վերջին մուտքը՝ 10.12.2018 թվականին:

RESUME - РЕЗЮМЕ

THE MAIN CHARACTERISTIC OF THE CONTRACT FOR THE STATE NEEDS

Nane Sahakyan

PhD student at Civil Law Chair of YSU

This article studies the concept of state contract signed for the satisfaction of state needs during public procurement process. The article also exposes the relation between opposing public and private interests. It reveals the simple and the complex contractual relationships.

Keywords: *public procurement, state (municipal) order, state contract, simple and complex contractual relationships, supply contracts, work agreements and contracts of services for state (municipal) needs.*

ОСНОВНАЯ ХАРАКТЕРИСТИКА ДОГОВОРА ПО ОБЕСПЕЧЕНИЮ ГОСУДАРСТВЕННЫХ НУЖД

Нанэ Саакян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В этой статье исследовано понятие договора по поставке товаров для государственных нужд, который заключается в процессе государственных закупок. Исследовано соотношение конфликтующих общественных и частных интересов в процессе заключения государственного договора. А также в статье раскрываются простые и сложные договорные отношения.

Ключевые слова: *государственные (муниципальные) закупки, государственный (муниципальный) заказ, государственный договор, простые и сложные договорные отношения, договоры поставки, подряда, подряда и оказания услуг для государственных (муниципальных) нужд.*

Բանալի բառեր - *պետական (համայնքային) գնում, պետական (համայնքային) պարվեր, պետական պայմանագիր, պարզ և բարդ պայմանագրային հարաբերություններ, ապրանքների մարտկառնությունը պետական կարիքների համար, կապալային աշխատանքների կառնությունը պետական կարիքների համար, ծառայությունների մարուցումը պետական կարիքների համար:*

ՆԱՅԵՍԵՐԵՐ - ԴԵԿՏԵՄԵՐԵՐ 2018 11 - 12 (233-234)